



ԼՐԱԳԻՐ

Ս. Մուրադյանի համար 150 դր. հաճախ
Լեզուական 80
Դատարանի համար 180
Լեզուական 100
Սեկ թիվը 1
Ծանուցման տարր 2

Դուրս գալիս լրագրաց ծախսը ծախքը
Խնայողական վրայ է
Լրագրաց վերաբերյալ նամակ կամ որ ե
իցե գրութիւն Խնայողի-Տնօրէնին
պիտի ուղղուի. եւ նամակ ծախքն ա
զրկուի վրայ է:

ԱՐԴԱՍԻՆԻ ԲԱՆԴԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԴԱՐԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԳՈՒՆ 24 ՅՈՒՆԻՍ 1866

ԲԱՆԴԱՍԻՆ

Պատերազմական լուրերը ժամանակէ մը
ի վեր քաղաքականութեան միւս գարձ
ւածներն ստուերի ներքեւ կը ձգեն, բայց
յաւաճումները եւ ազատութեան համար
եղած մրցումները մտաւորութեան մէջ ձգե
լու չէ, վասն զի պատերազմն ամեն բան կաւ
րէ, իսկ այս մրցումներն իրաւունքն ու ար
դարութիւնը թաղաւորներէն կը ծառա
յեն: Ենդղից մէջ կառավարութեան պաշ
տոնակները փոխուեցան եւ խորհրդարա
նին մեծագոյն մասը ժողովրդեան ընտրողա
կան իրաւունքն ընդարձակելու առաջար
կութիւնը ետ ձգեց: Թորի պաշտօնակա
ններն իրենց ծրագրին մէջ յայտարարութիւն
ըրին թէ առկիւմ այսփնդոյն չպիտի գըւ
ղեն, որ ըսել էր թէ պիտի ծաղկն ու մէկը
դնեն, վասն զի ժողովրդեան նոր արածու
թիւններ տալը փառագաւոր կը համարին. եւ
ի՞նչ հարկ կայ տալու՝ քանի որ ժողովուր
դը պիտի բռնի միջոցներով ձեռք բերելու
փորձ չիրաճէր:

Բայց դէպքերն հիմա ցոյց կուտան թէ
Պ. Ալեքանդրն եւ Պ. Պրայթ զուր տեղը
չէին ըսեր որ եթէ ժողովրդեան իրաւանց
պէտք եղած զինուորները ժամանակին չըլան
ծանր խռովութիւններ կը պատահին: Եւս
զինուոր նախորդ կառավարութեան ներկա
յայտեցած առաջարկութեան համեմատ 460
000 նոր ընտրուներ աւելցնելու վրայ կը կա
յնար: Բայց պահպանողական անդիակն
անհամաձայնութեան փոփոխութիւն մը հա
մարեցին կայն, այսինքն քաղաքականութեան
առաջնահարկը յաղթութիւն եւ անուա
ղեանութեան ալ առաջնահարկը անհաւատ:

Իրաւանց ու գորութեան մէջ բարդա
կան առնչութիւն չկրնար ըլլալ, բայց իւր
թափանց գոգաւորութիւն պէտք է. վասն
զի չենք իմացել թէ ըսենք թէ մէկն առանց
միւսին եղբայր չէ կրցած յաղթել: Իրաւունք
ունենալու է, բայց գորութիւն ալ ունենա
լու է: Գոյն յաղթող ընելու համար: Եւր
թողութեանը ազգաւ աւելցան, ազնուա
պետութիւնն իր առջեւ արգիլք մը չունե
նար եւ ինքնիշխան կը տիրէ: Ժողովուրդը
նկատմամբ անուականին կամ
տիրողին հաւատարմութեանը ունի, բայց ան
կարող է գոյն ձեռք բերելով պատշաճապէս
գործածելու: Սակայն երբ ժողովուրդը գի
տուն եւ հարուստ է, իր իրաւունքը կրնայ
ձեռք բերել եւ զայն արժանապէս գործա
ծել:

Ենդղից պատմութիւնը մասնաւոր կեր
պիւ կը հաստատէ մեր այս խորհրդածու

թիւնը: Ենդղից իրենց նիւթական եւ
բարոյական ազդեցութեամբ թաղաւորին
իշխանութիւնն ի վաղուց մեղմացուցած են:
Գրեթէ բոլորովին իրենց գործն է այն սահ
մանադրութիւնը, որոյ վրայ իրաւամբ կը
պարծի անդիական ազգը, վասն զի թէ եւ
ժողովուրդն անուականաց հետ հաւատա
րութիւն չունի, բայց օրինաց շնորհիւ ա
մեն ազատութիւն կը վայելէ: Ենդղից
այն անձը, խիղճը, միտքը, գործն անբա
նարարել են, եւ իշխանութիւնը չկրնար ու
ղծին պէս քաղաքացւոյն վրայ ձեռք եր
կրնել: Եզատութիւնն անդիական փո
փոխութեան անարգել յառաջ տարաւ մտա
ւոր եւ նիւթական զարգացման մէջ, ուստի
ժամն եկաւ որ ժողովուրդն ալ իր արժա
նաւոր գիրքը բռնէ ազգային օրէնսդրու
թեան եւ կառավարութեան մէջ:

Ենդղիական անուաղեանութիւնը հին
եւ ծիւղած բռնաւորական գաղափարներով
պաշարուած անուաղեանութիւն մը չէ, եւ
անոր համար ժողովրդեան ընտրողական իրա
ւունքն ընդարձակել չուզեր, վասն զի կը
փախնայ որ Սահմանադրութիւնն անփորձ
ձեռքերու մէջ կ'ըլլայ: Ենդղիական
թիւնը չափաւոր զինուորներ ընելու արժա
դիր է, բայց ժողովրդեան յառաջացելու մա
սը գոհացուցիչ զինուոր մը կուզէ, եւ ասոր
վրայ իր կամքը յայտնելու համար բազմա
գումար ժողովներ (միմիկ) կը կազմէ, ուր
ձառեր կը լսուին եւ ուղիւններ կատարու
թան խորհրդարանին ներկայացնելու հա
մար: Եւս ժողովներուն մէկն ալ Լոն
րոնի Հայտարարութեամբ հասարակաց պար
տիկն մէջ պիտի ըլլար, բայց կառավարու
թիւնն արգիլեց, վասն զի հասարակաց պա
րտապիտեւ եւ ձեռնիքներու մէջ անցու գալ
ծին արգիլող գումարութեանը կարգելու օ
րէնքը ժողովուրդն այս արգիլքը մոխի չընե
լով: Դժբաղդարար աստիճանութեան զբոյց
հետ կուլ մը հանեց, որ ինչպէս հեռագրի
րը կը ծանուցանէ, բաւական արիւնհակե
ղեր է: Բայց ետքը խաղաղութիւնը վերահաս
տատուեր է: Խորհրդարանին ներկայ նիստն
իր վախճանին մօտեցած ըլլալով ընտրողական
ինդիկն հետազայնիստին կը մնայ մինչեւ այն
ատեն ժողովներն ու գումարութեան հաստ
րակաց կարծիքն արժեւորութեան մէջ կը պա
հեն, եւ այս նշաններն կը տեսնուի որ ընա
րական իրաւունքն Ենդղից մէջ առկա
բաւական յուզմունք պիտի պատճառէ մին
չեւ որ վերջապէս լուծուի:

Պաղղից կառավարութիւնը Ենդղի
կուսին առաջարկութիւն մը ներկայացու
ցած էր որ Սահմանադրութեան վրայ վիճա
րանութիւնը կարգելու եւ երեսփոխանաց

արտօնութիւն կուտար առաջարկութիւններ
ներկայացնելու: Ենդղից այս առա
ջարկութիւնն ընդունեց կարճ վիճարանու
թենէ մ'ետեւ, որուն հետաքրքրական կեր
պարանք մը առաւ Պ. Տը Պուալի ձառը
որ Ենդղից կայսեր բաղարձակ կառավա
րութեան դէմ՝ բանի մ'աղջու ճշմարտու
թիւններ խօսեցաւ: Ենդղիական եւ Օ
րէնսդրական ժողովը նիստերը դժգոհեցան:

Ալեքանդր քաղաքագիտական ժողովը
ուզեր մը ներկայացուց կայսեր, որուն մէջ
խել մ'անձնուիրական յայտարարութիւն
ներէ ետեւ: Եւստից ժողովուրդը բերնէն
կառավարիչ որ կայսրը մէկը ձգէ մինչեւ այս
օր կառավարութեան բռնած ձախուք քա
ղաքականութիւնը որ ներկայ ծանր վիճա
կին պատճառ եղաւ, այլ իր գահին եւ տե
րութեան ամենէն պարտաւոր նշանակը ժող
վրդեան երեսփոխանութեանը մէջ փնտռէ
եւ ազգու եւ ճշմարտապէս ազատամիտ քա
ղաքականութեան մը հետեւի:

Ալեքանդր քաղաքագիտական ժողովին
այս նշանաւոր յայտարարութիւնը ժամանա
կի նշան մ'է, որմէ կրնար մեծ օգուտ քա
ղել Եւստից կառավարութիւնը:

Եզրիական ծովուն մէջ յուլիս 8/20 ին
օրը եղած նաւամարտին վրայ հեռագրեալ
հասած մանրամասն տեղեկութիւններէն կը
հասկնուի, թէ աւստրիացի յաղթող ե
լեր են: Խաղաղական նաւատուրն անտրի
այուց նաւատուրն հեռուաւոր ժամա
նակ Լիսա կըլլայ ամրոցներէն ալ օստո
կապէս քաղաքացւոյն մեծ վնաս կրեր, եւ
չկրնար ալ այլ եւս զինանալ: Ենդղի քաջ
ուեր է:

ԲԱՆԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ բարձրագոյն
Մայր թագուհւոյն սեղանաւոր Պ. սեմ.
Մըրընեան Եւտոն պէյին Լալայի առաջին
աստիճան եւ միանգամայն երկրորդ կարգի
Օսմանիէ պատուանշան շնորհուեցաւ:

—Արսուլ թէ կայսերական հեռագրաց եւ
թղթատարութեանց վերապետ Պ. սեմ.
Պ. Եզրիցն է Ենդղից Պ. արաբիոյ Բե
րայի եւ Պ. Պոլսոյ մէջ հեռագրական հա
ղորդակցութիւն հաստատելու դիմաւորու
թիւն ունի:

—Մայրաքաղաքիս զաղղիական լրագիր
ներէն մէկը լուր կուտայ թէ կայսերական
կառավարութեան բոլոր մեծ եւ փոքր պաշ
տոնատարներուն օգոստոսի ամսականը վար
պետի դրուի:

— Նորիկեան Մեծապատիւ մահտեսի
Նշան աղան՝ որ ժամանակէ մ'ի վեր հիւ
ւանդ էր, երէկ առաւօտ իր մահկանացուն
կնքելով, մեծահասակէս յուզարկաւորու
թեամբ Օրթագիւղէն խաղաղաւորուե
ցաւ և հոն իր նախնեաց հանգստարանն ամ
փոփուեցաւ:

Հանդուցեալ Նշան աղան բարերարոյ
և բարեգործ անձ մ'ըլլալով՝ զինքը ճանչոյ
նորուն ամենուն ալ սէրն ու համարումը կը
վայելէր: 1863ին ազգային անտեսական խոր
հրդոյ անդամ և աստեղագետ ընտրուելով,
Ս. Փրկչի ազգային հիւանդանոցի կիսուէր
շէնքերը նորոգելու կարեւոր և զգուշարկն
գործն իր վրայ առաւ, և բարեօրէն ազգայ
նոց ձեռնառուութեամբ զխմելով՝ գրեթէ 'ի
հիմանց նորոգելոյ յիշեալ ազգային հաստա
տութիւնը, առանց ծանրութիւն մը տալու
ազգային Սեդրոնիան թափուր սնտուկին,
և առանց պարտք մը թողուլ, որով մեծ և
շնորհակտեաց արժանի ծառայութիւն մը
մատոյց ազգին:

Եւս գործը միայն բաւական է իր յիշա
տան օրհնութեամբ յաւերժացնելու:

Հանդուցեալ Նշան աղան զեռ 65 տա
րեկան ըլլալով, իւր տարածամ մահուամբ
ազնի օգտակար անդամ մը կորսնցուցած
կրնայ համարուիլ:

— Ա. սեմ. Արարական պէյ Արամեան
Պէօլեքտէի մէջ հասարակաց պարտէզ
մը շինած է, որուն վրայ պնայմամբ կը խօ
սին տեսնողները: Աճախներ, կամուրջներ,
շինացի քեօշներ և գեղջկական խմբիկներ
կը զարդարեն յիշեալ պարտէզը, որ Փարի
զի Պառ սը Պալլոյին մէկ մանրանկարն է
կըսուի, և խիստ զուարճալի զօսաւարտ մը
պիտի ըլլայ Պէօլեքտէի բնակչաց ընտիր
մասին համար:

— Պատերազմի չարքը թէպէտ տակա
ւին աշխարհս աւերմամբ և սգով կը լցնէ,
և սպանման գործիքներուն կատարելագոր
ծութեան պատճառաւ ալ թէպէտ արդի
պատերազմներն աւելի աշխուռնաւ են,
սակայն մարդասիրութեան զգացումն ալ
հին ժամանակներէն շատ աւելի յառաջ
գացած է: Սպանութեան գործը կատար
ուելէ ետեւ՝ վերաւորելոց օգնութեան կը
փութացուի: Մանաւանդ բրուսիացիները
մեծ խնամք կը տանին թէ՛ իրենցմէ և թէ՛
թշնամիներէն ինկած վերաւորեալները ան
խնայ գարմանելու: Պատերազմը վերջա
նալուն պէս, վերաբոյժները պարտաւոր
կը կենան վերաւորեալներուն վերքերն պա
տելու: Եսնը յատկապէս շինուած կաւ
քերու վրայ կը դրուին, և բանակին առ
ժամանակեայ հիւանդանոցը կը տարուին,
ուրիշ ալ երկաթ ուղիով ցանաղան քաղաքնե
րու մէջ շինուած հիւանդանոցները կը զըր
կուին: Հասարակութիւնը հիւանդաց օգ
նելու համար մեծ օժանդակութիւններ կը
նէ, և ոչ միայն ստակ՝ այլ և ամեն տեսակ
հանգիւստ, կահ, զիւրք և այլն կը նուիրէ:
Եւս նաւերներուն գումարն օրը 4000 իւ
րացի կը հասնի եղեր:

Իսկ Եւստորի մէջ՝ ուր վերաւորելոց
թիւը գրեթէ անհամար է, զանոնք խնամե
լու գործն ալ ոչինչ նուազ գլխաւորութեամբ
յառաջ կը տարուի: Այսպէս իր պաշտօնե
րուն մէկը հիւանդանոց ըրեր է, և մեծա
մեծ իշխանութիւններ իրենց ապարանքին մէկ
մասը վերաւորելոց գարմանարան ըրած են:

Օտար երկիրներն ալ այս մարդասիրա
կան գործին կը մասնակցին: Եւզոյի, Վաղ
դիւի Պէլլիքայի և Ռուսիոյ մէջ և ուրիշ տե
ր

ղեր ստորագրութիւններ բացուել են՝ պա
տերազմին մէջ մեռնողներուն ընտանեաց օգ
նելու և վերաւորեալները խնամելու համար:

— Եսնուար հրացանն այս օրերս ա
մեն տեղ մեծ ուշադրութեամբ նիւթ եղած
է: Եւստայի տեղութիւններն արդէն ի
րենց հրացաններն այս դրութեան կը վերա
ծեն: Բայց Բրուսիացոց հրամանատար
ներուն խօսքին նայելով՝ յաղթութիւնը մի
այն ասեղնաւոր հրացանին շնորհիւ վատը
կած չեն, այլ անոր համար շինուած մաս
նաւոր փամփուշտին, որուն նմանը տակա
ւին ուրիշ տեղեր գտնուած չէ: Եւս փամ
փուշտներուն դարձարանը խիստ հսկողա
թեան ներքեւ դրուած է, և գործաւոր մը
գաղղիացոյ մը քանի մը փամփուշտ ծախած
ըլլալուն համար ստատիպէս պատժուեցաւ:
Թէ՛ հրացանը և թէ՛ փամփուշտը գտնողը
Տրէյս անունով զինագործ մ'է, որուն Բը
րուսիոյ կառավարութիւնը կամութիւն
և առատ ռոճիկ շնորհած է: Եւս հրացա
նին առաւելութիւններէն մէկն ալ այն է
որ զնոսիները փոքր են, բայց հեռու կեր
թան, և զարկած մարդիկը չեն մեռցնել,
այլ կը վերաւորեն և պատերազմելու անկա
րող կընեն:

— Եւստորիացոյ Քլամ-Ասլանս գո
րապետը՝ որ Սատովի պատերազմէն ետեւ
Ա. իննստ տարուած էր ուրիշ երկու գորա
պետաց հետ գաղութելու համար, յանցա
ւոր չգտնուելով թող տրուեցաւ: Իսկ միւս
երկու գորապետները թէ և տակաւին ար
գիւրուած են, բայց կը յաւացուի որ անոնք
ալ քանի մ'օրէն կարձակուին:

— Եւզոյիները Վաղդի կառավարու
թիւնն հրամայ տուած էր որ ձիու միան ալ
ուրիշ ուտելու միջոցներն անոնք սպանդանոց
ները փաճառուին: Եւս անգամ 'ի պատիւ
նոր կերակրոյն Փարիզի մէջ մեծ կոչուեց
մը տրուեցաւ ուր 182 հրաւիրեալներ կային,
որք ամենայն պարտաւոր կերան ձիու միսով
շինուած զանազան կերակուրներ:

— Եւստայի տեղութեանց զօրքը
հեռեկալ կերպով հաշիւ կը լայ՝ եթէ պա
տերազմի ատեն իրենց բոլոր զինուորական զօ
րութիւնը հաւաքեն, Վաղդիս 903617 հո
գի: Բրուսիոյ 650000: Եւստորիս 651612:
Խաղա 424193: Ռուսիոյ 1200000: Եւզ
ոյիս 465000: Բայ 'ի կամաւորներէն որ 230000
ի կրնայ հասնիլ: Վերմանական գաշակչու
թիւն 407360: Սպանիոյ 171500: Բորթու
կալ 64118: Հօլանտա 92000: Շուէտ և
Նորվեգիա 139800: Տանիարքա 41940:
Օւկրայնիա 193291: Պէլլիքա 80650:
Թուրքիա 341580: Եգիպտոս, Սօմալ
Ա. արաբիոյ, Վարաւաղ և Արվիս 152000:
Համ 12000: Համագումար 6226062:

Եւզոյիական ըստիւր մը կրնէ թէ պատե
րազմին մէջ սպանման և խեղդանալով ըլլա
լու անդամներն փախնելն 'ի բայ աւելալ
եթէ միայն մասձեքը որ այս 6 միլիոն հոգի
ներն անօգուտ են արդիւնաւոր աշխատաւ
թեան, ինչ մեծ նիւթական փառ մարդկային
ընկերութեան համար: Բոլոր Եւզոյի չա
փահա մարդոց թիւը հազիւ 6 միլիոնի կը
հասնի: Արեւմե կնթաղելով թէ ասոնց ա
մենը գործէ դադար և զինուոր ըլլան, այն
տան կրնանք ըմբռնել այն փառը՝ զոր ան
գործ զինուորաց բազմութիւնն անդալի կեր
պով կը հասցնէ ամեն տեղ:

— Եւստորի Պօնտիա գաւառը, զոր
հիմա բրուսիացիք գրուած են, 5 միլիոն բը

նակիլ ունի, որոց երեք մասին մէկը գեր
մանացի են, և մնացածը Շքալիս և Չէք
Եւս վերջիններն երբի տեսնեն իրենց ազ
գութեան նախնեանց ըրալով, Պօնտի
իոյ համար առանձին կառավարութիւն կը
խնդրեն, և զպրոցներուն մէջէն գերմանե
րէն լեզուն վերցնելով՝ դաստիարակութիւ
նը իրենց ազգային լեզուով տալ կուզեն:
Բայց Ա. իննստի արքունիքն իրենց մասնա
ւոր կառավարութիւն ուզելու խնդրը չի ա
տարելուն համար, իրենց ընդգիւծութիւնն
ալ երթալով սաստիկանալով վրայ է:

— Վաղդի Վարմանիա գաւառին
մէջ վարդապետ մը նաւասար եղբայր մ'ու
նէր, որ փոքրիկ և գեղեցիկ կապիկ մ'ընծայ
րերած էր իրեն հեռաւոր ճանապարհորդու
թենէ մը: Վաղիկն այնչափ սէր ձգած էր
վարդապետին վրայ, որ անոր եկեղեցի գա
ցած ժամանակ կենդանին տեղ մը գոցել
հարկ կը դար որպէս զի վարդապետին ետեւէն
չերթայ: Սակայն անցեալները՝ քարոզի օր
կապիկը միջոց մը գտնելով եկեղեցին կը
մանէ, և ամպրոնին վրայ ելնելով վարդա
պետին դիտուն ետեւ կը նստի և անոր շար
ժումներուն նմանութիւնը կ'սկսի ձևացը
նել: Դարձուալիս այս տեսնելով՝ ամեն ալ
կոխին ծիծաղել: Վարդապետն այս քրքիջնե
րուն պատճառը չգիտնալով՝ կոխի մեղմա
բար ժողովուրդն յանդիմանել, բայց Էյա
ջուիկը կը նեղանայ, և շարժումներն աւելի
կրիւքիկի ընել կապիկը ալ նոյն համեմատու
թեամբ իր խեղիատակ նմանութիւնը կա
ւելցնէ: ասիկէ ժողովրդեան քրքիջն ալ եր
թալով կաւելնայ: Ա. երջապէս մէկը նշան կընէ
վարդապետին որ ետին նայի, այն ալ ետին նա
յելով՝ կապիկը տեսնելուն պէս կը հասկընայ
ծիծաղին պատճառը, և ինք ալ չկրնալով
խնդալ, բռնել, կը հարկադրի վերջ տալ քա
րոզին:

— Փարիզի թատրոններուն մէկուն ջա
հալոյցը գիշերները բոլոր կանթ եղներուն իւ
ղը լեցնելէ ետեւ՝ իւրին սրուակը՝ որուն մէջ
միշտ բաւական իւղ կուեկնար՝ իրեն յատուկ
եղած խցիկի մը մէջ կը դնէր ու դուռը կը
գոցէր կերթար, բայց ժամանակէ մը 'ի վեր
կը տեսնէ որ սրուակին մէջ մնացած իւղն
անպար կըլլար: Ա. թ. ասան օր այսպէս եր
թալէ ետեւ ջահալոյցին համբերութիւնը կը
հասնի, և կուզէ իւրին գոլը բռնել: Աւս
տի գիշեր մը լաւ մը զինուորեալ խցիկին ե
տեւ գոց տեղ մը կապաւ և ապառախեայ որ
մին ձեղքուածներէն կը դիտէ: Դամ մը
սպանելէ ետեւ՝ կը տեսնէ որ ապառախամա
ծին մէկ կողմը գտնուած ծակէ 'ի հետ գհետէ
քոսն երկուսն խոշոր մկներ կ'ընեն, կերթան
սրուակին քով և մէջերէն տասնի չափը սըր
փորին շուրջ գոտի մը կը ձևացընեն: Աւ
ուակին մկներ ալ ասոնց վրայ ելնելով՝ երկ
րորդ և երրորդ գոտիներ կը ձևաւորեն ի
բարձր վրայ՝ մինչև որ սրուակին բերանը կը
հասնին: Եւս քրոջ հետ սրուակին բերանը
նեղ ըլլալով մեղեկութուն գուրը դժուարաւ
կընար մէջը մտնել, ջահալոյցը հետաքրքրու
թեամբ կը դիտէր թէ ինչպէս իւղը դուրս
պիտի հանէին սրուակէն: Որչափ մեծ կըլ
լայ խեղճին զարմանքը երբոր կը տեսնէ, որ
սրուակին բերանը ելող երեք խոշոր մկներ՝
կարգաւ իրենց երկար պոչերը սրուակին բեր
անէն ներս կը խոթեն և իւղին մէջ թափ
լած դուրս հանելով միւսներուն կեր 'նցը
նէին որ լցնեն: Եւս կերպով սրուակին մէ
ջի իւղը կուտեն:

Նախ՝ մեր պետունն եւ տոհմանուն յայսնի է
նչ միայն մեր վկայապահներով, այլ եւ հարեւրա-
ւոր անգամ գրոշմուած է թիֆլիզի եւ Ղարապաղի
պարտիաներու արձանագրութեանց մէջ, այլ եւ
մեր գրաւոր երկարափութեանց մէջ, որոնք
ծառնոթ են Ռուսաստանի հայերուն, եւ յուսամք
իւր ջաճկաստանի մէջ եւս չատերուն,

Երկրորդ՝ Մակար արքեպիսկոպոսն մեր վարդապետանալու մասին համաձայնութիւն եւ թաղման քցոյց տալով՝ ոչ թէ մոլորութեան կը ծառայէ, այլ նոյն իսկ արդարութեան, վասն զի լինելով վարդապետի եւ խմբի թիւ առաջնորդ եւ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան խորհրդին նախագահ՝ քաջ գիտէ մեր վարած պաշտօնները, քաջ գիտէ որ իբրեւ Ներսիսեան սան՝ պատրաստուած ենք եկեղեցական կոչման համար:

Երրորդ՝ Մատթէոս Կաթողիկոսը մեզ նոյն ված չէ, այլ կոնգրակ է գրած խանութեան տը պարտքը խափանելու, եւ մենք յայտնած ենք արդէն որ խանութեան դպրոց չկար եւ կոնգրակ երեւակայական էր, եւ դարձեալ նոյնը կը կրկնենք. բայց եթէ այս երեւակայական դպրոցի համար գրուած կոնգրակը նոյնը համարուի, ուրեմն այն բաղմամբ կոնգրակներու համար ի՞նչ անկնք, որոնք գրուած են բաղմամբ կոնգրակներ անձանց համար, օրինակի աղագաւ՝ Սարգիս արքեպիսկոպոսին ֆիլիպի դիմակէն հրաժարեցնելու համար. Գ. Թա՛րիսանին Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան հանկու համար, եւ այլն, եւ այլն: Եթէ մեր երեւակայական կոնգրակն ուղղութիւն համարուի, այս իրականներն ուրեմն պէտք է լինին նոյնը, նոյնը, բայց միթէ կընդունի՞ր անանուն անուակաղիրն:

Չորրորդ՝ Թիֆլիզցիք եւ Ղարապաղցիք Երեւակի աներեւոյթ թղթակցի նման հայոց եկեղեցւոյ պայծառութեան թշնամի չեն, որ մեր վարդապետանալու բաղմանքին համար վրդովին. Նոքա մեղ լաւ կը ճանաչեն եւ երջանկայաշատակ Ներսիսի հրամանով կարդացած մեր քարոզները շատ անգամ լսած են, եւ շատ բարի եւ բանիմաց մարդիկ յորդորած են մեզ արժութեամբ յարգել Ներսիսի հայրական կամքը եւ եկեղեցական լինիլ: Այս իրողութիւնները մեզ համար անուշիկութեամբ խորհուրդներ չունին, բայց եթէ Գ. Չամբարձեանին իր աներեւոյթ թեղթակցին իսպառ անձնատուր եղած չէ, կարող է ստուգել Թիֆլիզի Կոնստանտինոպոլսէն եւ Ներսիսեան դպրոցի հոգաբարձական գիւնանէն, եւ հինգերորդ՝ Բուսիոյ կառավարութիւնը Երեւակի նամակագրի նման թանձրաթիւ կամ խաղաղ չէ, որ գիւնակաւոր եւ չինձու բարբորթ մատակարարէ. եթէ գերողղափառ պատուելին մեղմէ կը փախչի իւրեւ աղանդաւորէ, գոնէ կարող էր ստուգել տեղւոյս ոռոտիական կանցիլերիայէն, ուր կը գտնուի մեր բարբորթը ամենայն օրինաւորութեամբ վաւերացած: Գիտէ՞ նոյն Չամբարձեան թէ քանի ատենի վկայութիւն կը պահանջուի բարբորթ ստանալու համար. գիտէ՞ արդեօք որ բաց ի այն անեաններէն, մեզ համար յատկապէս

գրով վկայած է եւ հայկական թեմական վարչութիւնը, Այս ամեն հանգամանքները չիմացող, չընտղ եւ վարդապետանալ հրատարակող պատուելի խմբագրին ի՞նչ ասենք. ինչով արդարացընենք եւ ի՞նչ պէտք ենք: Բայց մենք կը ներենք, որովհետեւ Երեւակէն ճշմարտախօսութեան ակնկալութիւն չունինք բնաւ, եւ իսկապէս համոզուած ենք, որ նորա պարտաւ մեզ համար գոյնաւ է, նոյնպէս եւ ամենի համար, որոնք կը լսած եւ քննած են Երեւակի ընթացքն, յատկապէս, պաշտօնն ու խորհրդանշան:

Այսքանն այս մասին իսկ Գ. Շանչեանի քերականական համար անանիս:

Գ. ՄԱՌԱՍԵԱՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Վ. ՊՅԷԼԱ 20 յուլիս:

Ինչպէս որ կը նախատեսուէր, դրամական վիճակին իր անցեալ շարաթուան հաստատութիւնը չկրցաւ պահել: Որպէս որ ալ անկման պատճառներէն մէկը մեր անցեալ շարթու լիշած է, ալ թիւերի անպատեհ յօդուածն եղաւ, բայց, ինչպէս որ անարկութիւն ըրած էինք, անկման գլխաւոր պատճառները կեցած էին, եւ սակաւ ինչ շփոթեցուցիչ յայտարարութիւն մը բաւական էր հրապարակաւ դարձեալ արժեւորու: Փոխառութեան վարձերուն ի գերեւ ելնէն արդէն Փարիզի եւ Անտալի մէջ ծանօթ ըլլալով, օսմանեան արժեթղթոց գինները թուլցուցած էին, եւ մեր հրապարակաւ ալ ետք առաջ եւրոպական հրապարակներուն ընթացքին պիտի հետեւէր: Արտուր թէ եւրոպական հրապարակներուն վրայէն օսմանեան արժեթղթերը կամայ կամայ Առաւելեալութեամբ քաշուած են, եւ ոմանք այս կերպով մեկնել կուզեն Եւրոպայի մէջ մեր արժեթղթոց շատ չի յաւրճու պատճառ: Սակայն ինչ որ ալ ըլլայ այս լուրին կարեւորութիւնը, յոյս ունինք որ առաջիկայ հոկտեմբերին ընդհ. պարտաւոր տոկոսներուն ճշգիւ վճարումը իսկաւ լաւ ազդեցութիւն կունենայ յիշեալ արժեթղթոց գիններուն վրայ:

Ի յիշերու, 18 յուլիս: — Հանգարտութիւնը տակաւին կը տիրէ: Ըմբիկայի բամբակ 12 1/2—17 1/2 p. Դղիպոսի 16—27. Թուրքիայի 9—12. Եւրոպ 12էն մինչեւ 18 եկած բամբակներն են 15 342 հակ, ծախուածները 45 000:

Մանչեսթեր, 17 յուլիս: — Ըմեն անսակ տարազներու (մանիֆաքթուր) առուտուրը հանդարտ եւ գինները թոյլ են: Մանիֆաքթուր քիչ ծախուեցան: Մանիֆաքթուր տակաւին սակարկութեան տակ են եւ հրապարակին վրայ անպատեհ չեն թանկեր: Պորտուգալի մէջ կը յուսացուէր որ եթէ Կարթէնի կայսեր միջամտութիւնն ազարդելու ելնէ, Բրուսիոյ զինուց կարգէ դուրս յաջողութիւնը պատերազմը շուտով կը վերջացնէ: Գերմանացի վաճառականները մանածի առուտուրները ըրին, բայց քիչ: Կուսները իսկաւ հանդարտ էին: Հնդկաստանէն ու շինաստանէն առնուած գէշ լուրերը վաւերացուցին ազդեցութիւն մ'ըրին հասաներուն վրայ, այնպէս որ առուտուր ընելու համար կտաւի տէրերը գինները շատ պակսեցնելու էին: Այս վճատեալ գոյացման աւելի ազդեցութիւն տուին քանի մը տարազաւորածաց մանիֆաքթուրները:

ՆԱԽՈՒՅՈՒՄ

Ներկայ յուլիս ամսոյ 21 հինգշաբթի օրէն (այսօրէն) սկսեալ Երեւակի Խաղիկէ 4 թիւ Պէյլէրպէ յի անուն շոգենաւը հետեւեալ կերպով պիտի երթնէ: Առաւել թի մէջ՝ ամեն օր՝ բաց ի կիւրակի եւ ուրբաթ օրերէն:

Իրիկունները ժամ 8ին կամուրջէն պիտի ելնէ, եւ Պէյլէրպէ, Օրթաքիզ ու Լինապուտ գեղ կրթալէ ետեւ ուղղակի կամուրջը պիտի դառնայ:

Ժամը 10 1/4ին վերադառնալու կամուրջէն պիտի մեկնի եւ Պէյլէրպէ, Օրթաքիզ, Լինապուտ գեղ, Բուսիզ—Հիսար, Իմիր չիէն, Եւսի գեղ, Թարապիտ հանգիստելով Պէյլէրպէէ պիտի երթայ:

Լուսնունդին ալ ժամը 12 1/4ին Եւսի Մահալէէն պիտի ելնէ, Պէյլէրպէ, Գանլըճա, Լինապուտ—Հիսար, Վանի գեղ, Պէյլէրպէ յի եւ Գուգիլունձուգ հանգիստելով կամուրջը պիտի դայ:

Ժամը 2 1/2ին կամուրջէն շիտակ Լինապուտ գեղ պիտի երթայ:

Ժամը 3 1/4ին Լինապուտ գեղէն պիտի ելնէ, Գուգիլունձուգ, Օրթաքիզ, Պէյլէրպէ եւ Գապարթաշ հանգիստելով կամուրջը պիտի դայ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԴՐԱՄԱՅ ԱՐԺԱՂԱՅԻՒՆԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	Երեւոյթ	Չորեքշաբթի
21 ԵՐԵՒԱՆ	46	48
Օսմանեան լիւրա Մէճ...	103	103
Քանապոյ արծաթ...	31.38	31.35

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 21 ԵՐԵՒԱՆ

ԱՐՄԱՆԻՔ

Ցորեն Թայրան կարծր	—
» Խաւայիլ »	23—30
» Բուսի Պալլէք	24—26
» Վաւնա »	26—27
» Խալապիլ կակուղ »	48—22
» Կալապ »	60—00
» Պուրկաղ »	00—00
Եգիպտացորեն կալապ »	—
Գարի »	40—44

ՄԵՏԱՔԱՐԱՆ

Պրուսա կարծ թէ ֆէ	560—570
» Երկան »	560—580
Շաքի հօխան ֆրանք »	45—50

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Բամպակ Պալլէքէն	Հօխայ	Ղուրուշ
» Կէյլէ »	»	—12
» Ասանա »	»	—13.20
» Ռուսաստան »	»	—13.00
» Բուրգ Էնիլերի լուացուած »	»	—11
» » Էլուսածուած »	»	—00
» Պալլէքէն Էլուաց »	»	—0
» Զէյրի Էնիլերի »	»	—00
» Թոխատ »	»	—00
» Զորուգ »	»	—00
» Մաղը սեւ »	»	—00
» Զերմակ »	»	—0
» Թիֆլիք Էնիլերի »	»	—40
» Աֆիօն Պալլէքէն »	»	210—220
» Բիլիք Ենիլերի բանուած »	»	00—00
» Սալէպ Տաճկաստանի »	»	—15
» Միկրամոմ գեղին Տրապիզոն »	»	—23
» » Անատոլի »	»	—21.20
» Սուսամ Բուսիլի »	»	—
» Կաւաւարի հոնա Բուսիլի Բիլէ »	»	—
» » Պանարմա »	»	—7.20
» Զէթ Այլուղ »	»	—7
» Կիլիկի »	»	—
» Անա (Սապոն) Գանալի »	»	—6.20
» » Միկրամ »	»	—5
» Բիլիք Եգիպտոս Բէշի »	»	—4
» Տիմաթ »	»	—

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Խաւայիլ Բիսի եւ Գաիօ 100 հօխան	Ղուրուշ
Շաքար Էլուէ 6-10 Լա. Կնդ. »	930—1050
» Զոլ. Էլուէ »	—290
» Գոլի »	—245
» Գաղղ. Էլուէ »	—280
» Գոլի »	—240
» Սիպա (գալայ) »	—670
» Պալլէք (պիլլէք) »	—6
» Էնիլէ (Էնիլի) Պէյլէրպէ »	—135
» » Մաւրաս »	—120
» Սիւսապ (Նոյապ) »	—620
» Պալլէք (Զէթիք) »	—180
» Կապար (Գուրուշ) »	—335
» Բիլիկ (Բիլիքէ) Պալլէք »	—340
» Զինք սախաւի թիւ 7—12 Էլու »	—600
» Երկաթ Սիպ. ձողաճեւ. Կնդ. »	68—70
» » Բեւեղու »	72—73
» » Բուրակ »	135—140
» » Բուսիոյ »	120—130
» Բարֆիճա Վարիլ 39 Էլու »	—102
» Խալիլպէճ Զէթ. Պալլէք »	—250
» Սաւաւէթ Վիլիսնա հօխան »	—15
» » Թիլիստ եւ Գաղղ. »	—14

Խմբագիր—Տօրեմ

Կ. Ս. ԻԿԹԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Կ. ՊՈԼԻՍ 21 ԵՐԵՒԱՆ ԽԱՍ